ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 242 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՄԻ ՇԱՐՔ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2020 թվականի հունիսի 26-ի N 751-Լ որոշման հավելվածի 16-րդ կետը՝

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի հունվարի 31-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության և Արաբական Միացյալ Էմիրությունների կառավարության միջև առևտրատնտեսական և տեխնիկական համագործակցության համատեղ հանձնաժողովի հայկական կողմի կազմը հաստատելու մասին» N 131-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 2-րդ կետի 1-ին ենթակետում «փոխվարչապետ Համբարձում Մաթևոսյանին» բառերը փոխարինել «էկոնոմիկայի նախարարին» բառերով.

2) 2-րդ կետի 3-րդ ենթակետում «փոխվարչապետ Համբարձում Մաթևոսյանի խորհրդական Աննա Գասպարյանին» բառերը փոխարինել «էկոնոմիկայի նախարարության միջազգային համագործակցության վարչության պետին» բառերով:

2. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի հունվարի 31-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության և Քաթարի Պետության կառավարության միջև համատեղ հանձնաժողովի հայկական կողմի կազմը հաստատելու մասին» N 130-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 2-րդ կետի 1-ին ենթակետում «փոխվարչապետ Համբարձում Մաթևոսյանին» բառերը փոխարինել «էկոնոմիկայի նախարարին» բառերով.

2) 2-րդ կետի 3-րդ ենթակետում «փոխվարչապետ Համբարձում Մաթևոսյանի օգնական Շուշաննա Կոստանյանին» բառերը փոխարինել «էկոնոմիկայի նախարարության միջազգային համագործակցության վարչության պետին» բառերով:

3. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի դեկտեմբերի 11-ի «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության միջև տնտեսական համագործակցության միջկառավարական հանձնաժողովի հայկական կողմի կազմը հաստատելու մասին» N 1853-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 2-րդ կետի 2-րդ ենթակետում «նախարարի տեղակալ Արմեն Ղևոնդյանին» բառերը փոխարինել «նախարարության համապատասխան ոլորտը համակարգող նախարարի տեղակալին» բառերով.

2) 2-րդ կետի 3-րդ ենթակետում «միջազգային տնտեսական ինտեգրման» բառերը փոխարինել «համագործակցության և բարեփոխումների» բառերով.

3) որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

15.03.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ